

Պ. Մ. Խաչատրյան

ՀԱԿՈՐ ԹՈՒԱՅՑԻ ՈՂԲԱՍԱՑԸ

Միջնադարյան հայ գրավոր մշակույթի պատմության մեջ համեստ անուն է բանաստեղծ, թարգմանիչ և գրիչ Հակոբ Թոխաթցին: Նա ծնունդով Փոքր Ասիայի Թոխաթ (Եվզոկիա) քաղաքից է, սակայն իր գիտակցական ողջ կյանքն անց է կացրել ոչ հայրենի բնակավայրում: Պահպանված հիշատակարաններում նա մեզ ներկայանում է իբրև «նժդեհ ու տնանկ» մի գործիչ, որ ծնընդավայրը վերադառնալու անշիջանելի փափագով՝ ծվարել է Իլախաց երկրի՝ (Լեհաստան) Զամոսցա քաղաքում և, որպես երեց, ծառայել իրեն բախտակից հայ բնակչությանը: Թեև Թոխաթցու ստեղծագործությունը մեծ ու ինքնատիպ տաղանդի արգասիք չէ, բայց նրանում ևս հարազատ շեշտերով արտացոլվում են մեր անցյալի եղբրական դրվագները. առանձնապես նրա պատմական թեմայով երկու ողբերը սրտաճմլիկ արձագանքն են այն բռնությունների, որոնց ենթակա էր ծվատվող ու պանդխտացող հայությունն իր հայրենի երկրում և օտար երկնքի տակ:

Տաղասացն իր ժամանակաշրջանը՝ 16-րդ դարի վերջը և 17-րդ դարի առաջին կեսը, բնորոշել է իբրև «ձմեռնացեալ շար ժամանակ»: Եվ արդարև, պարսկա-օսմանյան անընդհատ պատերազմները և ջելալիական խռովությունները շտեմնված շարիք էին դարձել ժողովրդական մասսաների համար՝ բերելով ասպատակություն ու կողոպուտ, սով ու տեղահանություններ, աշխատավորության արյունալի սպանդ ու մանկահավաք:

Հակոբ Թոխաթցուց մեզ հասել է բավական հարուստ գրական ժառանգություն (թվով 12 մեծ ու փոքր շափածո ստեղծագործություններ¹ և «Ծօթն իմաստասիրաց պատմութիւն» երկի թարգմանությունը, որ նա կատարել է լատիներենից): Նա գրիչն է դարձ պահպանված 6 ձեռագրերի², որոնք համեմատված են կարևոր տեղեկություններ պարունակող հիշատակարաններով: Վերջիններիս ընձեռած տեղեկությունների և հեղինակի մյուս գործերում եղած հպանցիկ հիշատակումների ուշի-ուշով քննելը հնարավորություն է տալիս թեև թերի, բայց իր հիմնական գծերի մեջ դիտելու նրա կյանքի ուղին: Հակոբի

1 Թոխաթցու շափածո ստեղծագործությունների ցանկը տե՛ս ն. Ա կ ի ն յ ա ն, Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921, էջ 162—178 և «Հանդես Ամսօրյա», 1932, էջ 339—340:

2 Նրա գրչությանը հայտնի են հետևյալ ձևագրերը.

Ա. ՀՍՍԻ Մաշտոցի անվան մատենադարանում (այսուհետև՝ Մատենադարան)՝ №№ 2856 (Վարդան Արևելցու՝ Մովսեսի Հնգամատյանի մեկնության և Հին կտակարանի մյուս աստերի ընդօրինակություն. ժամանակ՝ 1595 թ.) և 1005: (Տաղարան, 1—427ր էջերի գրության ավարտման տարի՝ 1605 թ.):

Բ. Երուսաղեմում՝ № 850 (ն. Համբրոնացու «Ատենախօսութիւն..» և «Խորհուրդ ս. պատարագի և Մեկնութիւն», ավարտված 1600 թ. դեկտեմբերի 2-ին: Տե՛ս Ա. Ա լ պ ո յ ա ճ յ ա ն, Պատմություն Եվզոկիո Հայոց, Կահիրե, 1952, էջ 1552):

Գ. Վիեննայի Կայսերական մատենադարանում՝ №№ 16 (Ճաշոց, ժամանակ՝ 1613 թ.), 17 (Հայամավորք, ժամանակ՝ 1617 թ.) և 7 (Մաշտոց, ժամանակ՝ 1638 թ.): Տե՛ս «Յուրակ հայրենի ձեռագրաց Կայսերական մատենադարանին ի Վիեննա», կազմեց Հ. Վ. Տաշյան, Վիեննա, 1891 (նշված համարներով ձեռագրերի նկարագրությունը):

մասին մի-երկու տեղեկություններ էլ տալիս են նրա ժամանակակիցները, որոնց կանգրադառնանք ստորև:

Հարկ է նշել, որ Թոխաթցու գրական վաստիւսկն անցյալում արժանացել է ճիշտ է, ոչ համակողմանի, բայց պատշաճ ուշադրության: Ալիշանը իր մոտումենտալ «Հայապատումում» (1901 թ.) առաջին անգամ հրատարակեց «Տաղ և ողբանք ի վերայ Եղովկիա քաղաքին» երկը: Ապա հմուտ բանասեր ն. Ակինյանը 1921 թ. իր «Հինգ պանդուխտ տաղասացներ» գրքում նրա կյանքի և ստեղծագործության մասին տեղ տվեց մի շահեկան հետազոտություն: Նա էր, որ 1932 թ. «Հանդես Ամսօրյայի» էջերում գիտական հասարակայնությանը ներկայացրեց նաև Թոխաթցու՝ իր կողմից հայտնաբերված «Ողբ ի վերայ Օլախաց երկրին» գործի համեմատական բնագիրը ամփոփ ուսումնասիրությամբ: Ակինյանի ուսումնասիրությունների տվյալները հետագայում իր «Պատմություն Եվդոկիո Հայոց» մեծածավալ գրքում (Կահիրե, 1952 թ.) օգտագործեց պատմաբան Ա. Ալպոյաճյանը:

Զեռագիր և տպագիր գրականությունից մեր հայտնաբերած նոր տվյալները այժմ հնարավորություն են տալիս ճշտելու բանաստեղծի կյանքին և ստեղծագործությանը վերաբերող մի շարք մոմենտներ: Սույն հոդվածում, բանասիրական այդ ուղղումների հետ միասին, մենք կփորձենք տալ Թոխաթցու շափածո ժառանգության, մասնավորապես պատմական թեմայով ողբերի, զաղափարական և զեղարվեստական արժեքը, մի բան, որ հարկ եղած շափով շեն արել նախորդ ուսումնասիրողները:

* * *

Տաղասացի ծննդավայրը, ինչպես նշվեց, Փոքր Ասիայի Եվդոկիա կամ Թոխաթ քաղաքն է, որը XVI—XVII դարերում հայ մշակույթին տվել է մի շարք նշանավոր գործիչներ՝ տպագրիչ Աբգար Դպիր, Մինաս, Ղազար, Ստեփանոս, Խաչատուր և այլ տաղասացներ, որոնք բոլորն էլ իրենց ծննդատեղիի համաձայն կոչվել են Թոխաթցի: Հակոբն էլ հաճախ է իրեն այդպես համարում («Ի քաղաքէն եմ Թոխաթի», «Յակոբ էրէցս Թոխաթցի», «Թոխաթցի տէր Յակոբ» և այլն): Ժամանակակից Հակոբ Թոխաթցի Այվաթենցից զանազանելու համար տաղասացն ինքը և գրիչները իրեն սովորաբար հիշում են նաև «Յակոբ Բաթուկենց» կամ «Բաթուկի տէր Յակոբ» անունով: Ըստ երևութիւն. Բաթուկը եղել է նրանց օջախի հիմնադիրներից մեկը, որովհետև ծննդավայրի ավերմանը նվիրված իր ողբում բանաստեղծն ասում է. «Ի Բադուկենց թռուանցն էի...»³:

Հակոբ Թոխաթցու ծննդյան թվականի վերաբերյալ միակ բայց անուղղակի վկայությունը հետևյալն է. 1657 թ. նոյեմբերի 9-ին լեհական Զամոսցա քաղաքում 60-ամյա Սիկոլ անունով երեցն ավարտում է մի շարականոցի ընդօրինակում, որի հիշատակարանում հիշման է արժանացնում նաև տեղի Ս. Աստվածածին եկեղեցու «մեղսաբախչ», «աշխատաւոր և ծերացեալ ալեօք 94-ամեայ տէր Յակոբ»⁴ քահանային: Սա, անկասկած, Հակոբ Թոխաթցին է: Առաջինը բանասեր ն. Ակինյանն է, որ հիմնվելով հիշյալ տեղեկության վրա՝ «Հինգ պանդուխտ տաղասացներ» արժեքավոր գրքում անդրադարձել է տա-

³ Մատենադարան, ձեռ. № 10050, էջ 347ա:

⁴ Ալիշան, Կամենից, Վենետիկ, 1896, էջ 192 (այսուհետև՝ Կամենից):

ղերգուի ծննդյան տարեթվին: Իժբախտաբար բաղմավաստակ գիտնականը 1657 թվականն անդգուշաբար ընթերցել է 1667 և նրա մասին արված հիշատակությունը, հետևապես և՛ ծնունդը, մեկ տասնամյակով մոտեցրել մեզ⁵: Ստացվել է այնպես, որ Թոխաթցին ծնվել է 1573-ին. մինչդեռ, ըստ նիկոլերեցի հաղորդման, նա ստույգ ծնված պիտի լինի 1563-ին:

Հավանաբար ծննդավայրին ու ծնողներին՝ Ալթունին և Աննային, Հակոբը հրաժեշտ է տվել երիտասարդ հասակում. համենայն դեպս 1595 թ. վերջերին նա արդեն լեհական Զամոսցա նորաշեն քաղաքում էր, որտեղ Հովհաննես Կաֆայեցի եպիսկոպոսի պատվերով նոյեմբերի 22-ին ավարտել է մի մեծադիր և էջաշատ ձեռագրի ընդօրինակումը⁶: Սրա վերջում, հիշատակարանից հետո, տեղավորված է ողբասացի «Ողբ ի վերայ Օլախաց երկրին» շափածո գործի մի թերի օրինակը (վերջից կիսատ)՝ հորինված նույն Հովհաննեսի հրամանով: Ողբի մեջ Հակոբը հաճախ հիշում է Օլախաց երկրում (Մոլդավիա) կատարված դեպքերի ամսաթվերը, իրեն էլ ներկայացնում իրրև վերահաս սարսափներին ենթակա և այն կողմերում ևս պանդխտություն ապրած մարդու շեղանկապես սխալ շի լինի կարծել, որ մինչև Զամոսցա քաղաքում հաստատվելը նա, գուցե մի-երկու տարով, հանգրվանել է Օլախաց երկրում, հավանաբար Յաշ քաղաքում, որը եղել է նաև Հովհաննես Կաֆայեցի եպիսկոպոսի նստավայրը: Վերջինիս մասին գրիշ-տաղասացը երախտագիտությամբ է խոսում նաև վերոհիշյալ ձեռագրի շափածո հիշատակարանում.

Տէր Յովաննէսըն Կաֆացին,
Նպիսկոպոս սուրբ և արհին՝
Որ փափաքեաց նա այս գրրին՝
Զիս էառ իւր հոգոյ որդի»⁷:

Ըսկ ողբի եզրափակիչ մասում շի զլանում նշել, որ իրեն որպես աշակերտի որդեգրած այդ եպիսկոպոսը

Զեռնաղըրեաց ի յայսմ երկրի
Զորս աստիճան կարգ զըպիրի»⁸:

Առանձին ջերմություն ու գորովանք է տածել Թոխաթցին նաև Հակոբ Այվաթենցի նկատմամբ, որը նրա ուսուցիչն է եղել, հավանաբար, տարագնացությունից առաջ, Թոխաթ քաղաքում: Այվաթենցին նա հասցեագրել է նամակ-բանաստեղծություններ, նրա խնդիրքով Կրեյ մի ողբ, կատարել թարգմանություն:

Տարակուսանք է առաջացնում Ակինյանի այն կարծիքը, թե 1601—1602 թթ. լեհական կանցլեր Յան Զամոյսկին լվովին մերձ իր անվամբ հիմնադրել է Զամոսցա քաղաքը, որտեղ բնակություն հաստատած մեծաթիվ հայերը, կա-

⁵ «Հինգ պանդուխտ տաղասացներ», էջ 148-ում նշված է. «նիկոլ երեց 1667 նոյեմբեր 9-ին ի չամոսցա տեսած է զիւրը դեռ կենդանի...»:

⁶ Մատենադարան, ձեռ. № 2856:

⁷ Անդ, էջ 463ա:

⁸ Տես՝ Հ. Ն. Ա կ ի ն յ ա ն, «Յակոբայ Թոխաթեցոյ Ողբ ի վերայ Օլախաց երկրին» («Հանդես Ամսօրյա», 1932, էջ 346): Ողբի եզրափակիչ մասից մեջբերումները կատարում ենք ըստ այդ հրատարակության:

ոուցելով սեփական եկեղեցի, իրենց հովվելու են կանչել Հակոբ Թոխաթցուն⁹, Իսկ Ալպոյաճյանը, հետեւելով նրան, ավելի որոշակի տարի է նշում. Հակոբը «1602-ին հաստատված է լեհաստանի Զամոսցա նորահաստատ քաղաքը, ուր քահանայագործած է»¹⁰: Մի էջ հետո Ալպոյաճյանը, սակայն, հերքում է ինքն իրեն, թեև այս անգամ էլ չի մոտենում ճշմարտությանը: Մատնացույց անելով, որ Հակոբը եղել է նաև գրիչ, նա վկայակոչում է Երուսաղեմի № 850 ձեռագիրը, որի գրչագրումը Թոխաթցին ավարտել է 1600 թ. դեկտեմբերի 26-ին Զամոսցայում¹¹. նշանակում է՝ այս թվականին նա արդեն Զամոսցայում էր:

Հայտնի է, որ հիշյալ քաղաքն ավելի վաղ է հիմնարկված: Այդ մասին վկայում է նաև Կամենիցի հայ տարեգիրը: Սա հայկական ՌՆ (1586) տարվա դիմաց նշել է. «Ոմն մեծ իշխան, որ էր թագաւորին քանձլեր, այսինքն մոհրտար (կնքապահ), և շինեաց իւր անուան վերայ քաղաք մի և եղ յանուն քաղաքին Զամոսց. քանգի և ինքն այս իշխան Զամոսքիյ կոչէր. և անդ կոչեաց զՀայ ազգն... զոր և զնացին փոքր ի շատէ նոքա, որ էին եկբ և օտարք Հայոց տանէն...»¹²: Ուրեմն հայ գաղթականության մուտքը այնտեղ 1601—1602 թթ. ավելի առաջ էր սկսվել: Ինչպես վերևում տեսանք, Մատնադարանի № 2850՝ ձեռագրի ընդօրինակումը Հակոբ Թոխաթցին ավարտել էր հենց այդ նորաշեն քաղաքում դեռևս 1595 թ. վերջերին: Զարմանալի է, որ այդ ձեռագրին ծանոթ Ն. Ակինյանը հաշվի չի առել (կամ չի նկատել) նրա գրչության վայրն ու ժամանակը:

Ջելալինների ահավոր ասպատակություններից 1602 թ. Թոխաթից և այլ վայրերից բնավեր դարձած հայության մի հոծ մասսա ալիքվում էր դեպի Եվրոպա: Զամոսցայի ասպնջական պարիսպներն, անշուշտ, պատսպարեցին շատ հայերի: Մեր տաղասացին ու նրա տիկնոջը՝ Յաղութին, 1603 թ. իր գրչագրած ավետարանում չի մոռանում հիշման արժանացնել տաղասաց Ղազար եպիսկոպոս Թոխաթցին, որ, իբրև նժդեհ, հյուրընկալվել էր նրանցից. «...բազում աշխատութեամբ և երախտիք աշխատեցան ընդ անարժանութիւնս իմ եթէ կերակրով և եթէ ըմպելիօք...»¹³, — գրում է նա:

Բազմավրդով այն տարիներին ամայացող հայկական բնաշխարհում մարդկանց հետ միասին գերվում էին նաև նրանց գրավոր մշակույթի նշխարները՝ տքնությամբ ստեղծված ձեռագրերը: Պատահական չէ, որ 1595 թ. ժամանակի կաթողիկոս Ազարիայի մի դիմումի մեջ տազնապով նշվում է հայերեն ձեռագրերի սակավության մասին¹⁴. Հարկավոր դեպքերում ընդօրինակելու համար գրիչները մեծ դժվարությամբ էին ձեռք բերում դաղափարօրինակներ:

⁹ Անդ, էջ 338.

¹⁰ Ա. Ալպոյաճյան, Պատմություն Եվրոպիո Հայոց, Կահիրե, 1952, էջ 1551.

¹¹ Անդ, էջ 1552.

¹² «Կամենից», էջ 54: Ի դեպ, դիտական դրականության մեջ Զամոսյակ (Զամոստ) քաղաքի հիմնարկման ժամանակի համար նշվում է նաև 1580 թ., այսպես՝ «В 1780 г. на месте своего родного гнезда Скокови Замойский основал ф. Замость и устроил там, в 1594 г., академию, по образу итальянских университетов» («Энциклопедический словарь», т. XII, издатели Ф. А. Брокгауз и И. А. Ефрон, С.-Петербург, 1894 г., стр. 205):

¹³ Հ. Ներսեսյան, Յուդակ հայերեն ձեռագրաց համալսարանի մատենադարանին ի վրով («Հանդես Ամսոյա», 1936, էջ 506):

¹⁴ Տե՛ս Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ աղատադրական մտքի պատմության, գիրք 2, Երևան, 1959, էջ 49:

Որպես հայ մատենագրության պահպանման և զարգացման նախանձախնդիր՝ Հակոբ Թոխաթցին Ջամոսցայում ծավալում է գրչի և հավաքողի գործունեությունը: 1608 թ. նա հաղորդում է, թե շատ է ցանկացել գրչագրել մի աստվածաշունչ, բայց «ոչ գտանէի զգաղափար», նույնիսկ «մինչ ի տասնամ խնդրեալ աստ և անդ, ոչ կարացի ձեռն բերել»¹⁵: Դրանից տարիներ առաջ, 1603 թ., Հակոբի հետ դժբախտություն էր պատահել. եկեղեցում ճրագից ցայտած կայծից գիշերը նրա զգեստի հետ միասին այրվել էին ճաշոցն ու հայսմավուրքը: «...յերեկոյ է մինչև ցառաւօտն ծախեալ ծխեցաւ...—տրտմությամբ պատմում է նա: Եւ այսպէս զրկեալ կողոպտեցայ ի մեծամեծ գանձուցս ի յայսցանէ...»¹⁶:

Մեծ ջանքերի գնով նա գտնում է նոր օրինակներ և բազում տարիների աշխատանքով գլուխ բերում նրանց գրչագրումը (բնորոշ է, որ երկուսի համար էլ հայտնում է. թե «մեծաւ ջանիւ հազիւ առաք զգաղափար սորա ի մայրաքաղաքէն Իլովայ») ¹⁷:

Թոխաթցու գրչագրած ձեռագրերից վերջինը, որ մեղ է հասել, մի մաշտոց է՝ գրված 1638 թ. դարձյալ Ջամոսցայում՝ իր քահանայացած ավագ որդու համար: Այդ ժամանակ նա արդեն 75 տարեկան տկար ու երերուն ծերունի էր. մաշտոցի հիշատակարանում գանգատվում էր իր «ծերացեալ և փտեալ» մարմնից¹⁸: Հակոբ երեցը, սակայն, ապրեց էլի երկու տասնամյակ. նրան դեռ կենդանի ենք տեսնում 1657 թ., ինչպես վկայում է գրիչ նիկոլի շարակնոցի վերոբերյալ հիշատակարանը:

Անհամոզիչ է թվում Ակինյանի միտքն այն մասին, թե Հակոբ Թոխաթցին 1678 թ. շարունակում էր ապրել: Նա այդ վարկածն ապացուցելի է համարում հետևյալ պատճառաբանությամբ. Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում 304 համարի տակ պահվում է Հովհաննես գրչի ձեռքով 1678 թ. 4. Պոլսում ընդօրինակված մի ձեռագիր՝ մատենագրության մեջ մեր տաղասացի անունով հայտնի «Հակոբի սաղմոսարանը»: Իբր այդ մատյանն այնուհետև «Հակոբ աչքի անցուցած սրբագրած է և թղ. Ցա դողդոջունն ձեռքով հիշատակագրած է. «Երգեալ Թոխաթցի Յակոբ իրիցէ, յիշել աղաչեմ»¹⁹: Իսկ 168բ էջում, իբր, լրացրել է մի տող, որ գրիչը կիսատ էր թողել:

Սույն ձեռագրի նկարագրությունը կա մեծահմուտ գիտնական Հ. Տաշյանի մոտ, որը վերևի հիշատակությունը և հավելումը չի դիտել իբրև անմիջապես Հակոբի գրչի արդյունք, այլ պարզապես՝ «նոր ձեռք»²⁰ (ի դեպ, Տաշյանը քաջ ծանոթ էր Հակոբի գրչագրած երեք ձեռագրերին, որոնք գտնվում են Վիեննայի Կայսերական մատենադարանում): Բնականաբար մի ուրիշը ևս. կարդալով հարզված գրական գործչի սաղմոսարանը և վերահասու դառնալով նրա ըղձանքին, թե՛ «...զի՛նչ թողից յետ վաղճանի իմոյ յիշման»,—Թոխաթցու անունը վառ պահելու նպատակով կարող էր ձեռագրի լուսանցքում նշել:

15 «Կամենից», էջ 169:

16 Ցուցակ հայերեն ձեռագրաց կայսերական մատենադարանին ի Վիեննա, կազմեց Հ. վ. Տաշյան, Վիեննա, 1891, էջ 23:

17 Անդ, էջ 23 և 26:

18 Անդ, էջ 13:

19 Ա կ ի ն յ ա ն, Հինգ պանդուխտ տաղասացներ, էջ 148:

20 Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա, կազմից Հ. վ. Տաշյան, 1895, էջ 732:

«Նրգեալ Թոխաթցի Յակոբ իրիցէ, յիշել աղաչեմ»: Խիստ դյուրահավատ պիտի լինել տաղասացին կենդանի տեսնելու 1678 թ., 115 տարեկան հասակում, երբ հավաստի փաստեր չկան: Ոչ միայն 1670-ական թվականների, այլև նախորդ տասնամյակի աղբյուրներում Թոխաթցու անունն այլևս չի հիշատակվում որպես կենդանի ժամանակակցի: Այսպես, պահպանվել է պապական միսիոներ Գալանոսի զինակից Ալոյիսիոս Մարիուս Պիդուի ընդարձակ գեկուցագիրը՝ Լեհաստանի հայաշատ վայրերում 1664—1669 թ. ապրիլն ընկած ժամանակաշրջանում կաթոլիկական դավանանքի օգտին իրենց ծավալած գործունեության վերաբերյալ²¹: Այնտեղ նա մանրակրկիտ կերպով ներկայացնում է հայկական եկեղեցիներն ու վանքերը և բնութագրում հոգևորականներին՝ մեկ առ մեկ արձանագրելով նրանց անունները: Նա խոսում է նաև Զամոստիե քաղաքի քահանաների մասին, որոնք երկուսն են եղել՝ Հովհաննես Քրիստոստուրովիչ և Պետրոս: Սույն Հովհաննեսը, իբրև Թոխաթցու պաշտոնակից, հիշվում էր նաև Նիկոլ երեցի՝ վերևում նշված հիշատակարանում («...և միւս այլ տէր Յովանէս պատուական քահանայի, որ է որդի Քրիստոսատուրի Կաֆայի քաղաքի»²²,—ասված է այնտեղ): Պիդուի չի տալիս Հակոբ Թոխաթցու անունը, մի հանգամանք, որով ավելի է հաստատվում այն կարծիքը, որ վերջինս 1664 թ. արդեն վախճանված էր, իսկ Զամոսցայի ավագերեցության պաշտոնն անցել էր նրա կրտսեր ծառայակից Հովհաննեսին:

Այդպիսով վաստակած ծերունին կյանքին հրաժեշտ պիտի տված լինի ոչ ուշ, քան 1664 թ., ամենայն հավանականությամբ՝ 100 տարին չլրացած:

* * *

Հակոբ Թոխաթցի տաղասացի գրական-ստեղծագործական կյանքը տևել է չորս տասնամյակ. ժամանակով ամենից վաղ հորինվածը Օլախաց երկրի մասին ողբն է, իսկ վերջինը՝ «Բ վերայ Նրուսաղեմի» տաղ-ներբողը (գրված 1635 թ.):

Նրա տաղերը մեծ մասամբ կրոնա-խրատական բովանդակություն ունեն և լի են իրապես անմեղ, բայց մեղսագործի վիճակում իրեն ներկայացնող միջնադարյան մարդու հոգեխռով ու տանջալի զգացմունքներով: Խրատում է նա, բայց նրա խրատն ու պահանջը, Նարեկացու պես, ուղղված են, ամենից առաջ, իրեն. սովորաբար չկատարած հանցանքի զղջման ու աղոթքի մեղեդիներ է հնչեցնում նա՝ խոսքն ուղղելով աստծուն: Այսպես՝

...Յարածամ, հանապազ լալով արտասուեմ,

Բըժըշկիդ իմաստնոյ զվէրս իմ ցուցանեմ:

Ի քէն, տէր, ակն ունիմ և ոչ երկմըտեմ,

Զի դու քաղցր ես բնութեամբ՝ զայն ես քաջ գիտեմ...²³

Թոխաթցու տաղերից երկուսը նվիրված են ուսուցիչ Այվաթենցին: Դրանք նամակ-բանաստեղծություններ են, որոնցում, իբրև նրա երբեմնի աշակերտը, Հակոբը որդիական նվիրվածությամբ փառաբանում է նրան՝ դիմելով պանծացնող մակդիրների ու համեմատությունների: Հայրենի քաղաքից տարա-

²¹ Տե՛ս «Բոնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հոովմայ», հրատ. Կ. Նզյանցի, ՍՊՔ, 1884, էջ 1—135:

²² «Կամենից», էջ 192:

²³ Մատենադարան, ձեռ. № 10006, էջ 37—38ա:

գրյալ բանաստեղծը շարունակ մտքով կապված է եղել ուսուցչի հետ, բաղձացել է արժանի լինել նրա տեսության, բայց և միաժամանակ գիտակցել է, որ՝

...Ձունիմ հընար տեսնուլ զդէմքըդ բաղձալի,
Ձի ծովն ովկիանոս ի մեր մէջ ծրփի²⁴։

Նա աչք բացել և մանկության ու պատանեկության անհոգ տարիներն անց էր կացրել գեղատեսիլ Եվդոկիայում, բայց բռնությամբ պարտադրված թուրքական դրացիությունը, շարունակ մոլեգնող ելուզակային իր տարերքով, այնտեղ հայերի կյանքը դարձրել էր սաստիկ երերուն ու վտանգաշատ։ Թերևս այնտեղի անապահով կյանքն էր խթանել նաև Թոխաթցուն հաստատվելու Ջամոսցայում։ Սակայն հետագայում մանկական ու պատանեկան ժամանակի հետ կապված հուշերը նրա մեջ միշտ բորբոքել են հայրենական կարոտի զգացումը, իսկ ուսուցիչ Հակոբ Այվաթենցը տաղասացի կողմից կարծես, դիտվում է որպես հայրենին խորհրդանշող մի իդեալ-անձնավորություն։

Ժառանգորդի ծրնեալ ես դու հայրենի
Եւ ջահ լուսոյ՝ փայլեալ ի մէջ աշխարհի²⁵։

Այն հանգամանքը, որ Թոխաթցին ծննդավայրից ու ազգականներից կտրված է եղել, նրա քերթվածներին հաղորդել է թախծոտ երանգներ։ Հաճախ է նա իրեն համեմատում գրի մեջ բանտված փետրաթափ թուշունի կամ լույս տենչացող, բայց խավարում տվայտող էակի հետ։

Ինչպես միջնադարյան շատ հայ բանաստեղծներ, այնպես էլ Թոխաթցին, որպես կրոնական գաղափարներով համակված մարգ, մեծ զոհողություններ զնով ցանկացել է իր մեջ մեռցնել երկրային զգացմունքները, ամեն կերպ խուսափել «աստընուորէն», իր «մեղանշական» անձը, կամքն ու միտքը մաքրել հանդերձյալ կյանքի համար։ «Յակոբայ ասացեալ վասն անձին իւրոյ» տաղի մեջ այսպես է արտահայտված այդ տրամադրությունը.

Ո՛վ Յակոբ Լրէց Թօխաթու յերկրէն,
Լեղացար զբաղմամբ ի յաստընուորէն,
Թօթափեա՛ զմըրուրդ, փախի՛ր ի շարէն,
Որ շի զըրկիս դուն յանանց պրսակէն։

Բրնաւ դու զըրոց երբոր հըմուտ շես,
Ա՛յ անմիտ Յակոբ, քանի՛ ձաբըտես,
Թողեր ըզգերանդ՝ զայլ ոք խըրատես,
Ձմըտաց աչքըդ բա՛ց և հայեա՛ց ի քեզ²⁶։

Ցավալի և երկրամերժ այս խոհերին, սակայն, քերթողը մյուս կողմից անուղղակիորեն հակադրվում է մահվանից հետո հետնորդներին գրական ավանդ թողնելու և բարի հիշատակի արժանանալու իր ձգտումով։ Նա որոշում

24 Անդ, ձեռ. № 10050, էջ 342բ։

25 Անդ, էջ 341բ։

26 Մատենադարան, ձեռ. № 10006, էջ 38բ—39ա։

է Իսրայելի թագավոր Դավթի անունով հայտնի սաղմոսները տաղաչափել խրթին տեղերը մեկնություններով համեմելով: Իր այգ մտահղացումը գլուխ է բերում 1628 թ.²⁷: Տաղերգուն համոզված է եղել, որ եթե գեղեցիկ խոսքը գնահատող մարդկանց իր երկն ընդունելի դառնա, ապա նրանք այն՝

...Յայնժամ երգով եղանակեն մրտաուական
Եւ զանարժանս արժան առնեն նոքա յիշման²⁸:

Երկի հիշատակարանում Թոխաթցին ընթերցողին դիտել է տալիս, որ եկեղեցական շրջաններում պարփակված հոգևոր երգի հետ կողք-կողքի ախորժելի ու քաղցր է նաև աշխարհիկ բանաստեղծությունը.

Եւ արտաքոյ եկեղեցոյս բազում այլ կան
Ոտանաւորըս գեղեցիկ շարադրական՝
Հընչեն յականջըս լըսողաց յոյժ քաղցրաձայն,
Համեղ բանիւ, յարմարաւոր և յախորժական²⁹:

Աշխարհիկ երգի նկատմամբ նրա հիացական վերաբերմունքի արգասիքն է այն ձեռագիր տաղարանը, որ համբերատար աշխատանքով նա գրչագրել-ավարտել է 1605 թ.: Նյութերի բազմազանությամբ ու հարստությամբ անբասիր ու վճիտ գրչությամբ այդ տաղարանը հայ միջնադարյան ամենաարժեքավոր ժողովածուներից է: Նրանում կենսաթրթիո բանք ու տաղեր ներառնելու կապակցությամբ, իրեն թերևս եկեղեցու առաջ «արդարացնելու» համար, Հակոբը մի տեղ նշել է.

Ա՛յ յիմար գրրիչ յէ՛ր օրինկեցիր,
Լըսողին սիրտըն կըրակ դու լըցիր,
Քեղի ատեն է՛ որ փոշմանէիր՝
Քո որդուն խաթրին համար գրբեցիր՝:

Տաղարանն ընդգրկում է նարեկացուց մինչև Հակոբ Թոխաթցին ստեղծված հայ բանաստեղծության բաղմաթիվ գանձեր, ինչպես և մի քանի արժեքավոր նմուշներ ժողովրդական բանարվեստից: Այս ժողովածվի կարևորությունն ընդգծելու համար բավական է նշել, որ նրա էջերում Ֆրիկի ստեղծագործություններից պահպանվել են 9 տաղեր (ի դեպ, Մատենադարանի մյուս ձեռագրերում քնարերգուի տաղերից շուրջ 13-ի ընդօրինակությունները միայն կան): Նկատելի է, որ Թոխաթցին առանձնակի ուշադրություն է դարձրել մեր ժողովրդի կյանքի հետ անմիջականորեն առնչվող պատմական թեմայով ողբերին: Տաղարանում նա տեղ է տվել «Տաղ վասն շարժման կարմիր գլխոյն» և «Տաղ Յակոբ վարդապետին և ընկերաց նորին» գործերին, Մինաս ու Ստեփանոս Թոխաթցիների և իր ողբերին: Ստեփանոսի «Ողբ...ի վերայ Եղովկիա մեծ քաղաքին» գործի վերջում հայության ցավերով համակված գրիչն ավելալացրել է.

27 Հակոբը հիշատակագրել է. «Արդ գրեցաւ սա ձեռամբ Յակոբի՝ սորին շարադրողի, յագմանդի և յոգնասղալ յանցաւորի, ի յիշատակ հոգւոյս տկարի. ի թուականութեանս հայկական տումարի ՌՉէ ամի ի 25 յունվարի ամսոյ յանդ ելաւ...» (տե՛ս «Կամենից», էջ 179):

28 Մատենադարան, ձև. № 2939, էջ 519ա:

29 Անդ, էջ 518բ:

30 Անդ, ձև. № 10050, էջ 385ա:

...Յորժամ ըզտաղս որ ես տեսի՝
Նըստեալ լալով փոխարկեցի³¹։

Գնահատելի է նաև Թոխաթցի-թարգմանիչը։ Նա է լատիներենից թարգմանել միջնադարի՝ աշխարհիկ բովանդակությամբ գեղարվեստական արձակի լավագույն նմուշներից մեկը՝ «Եօթն իմաստասիրաց պատմութիւն» երկը, որի նախօրինակն ստեղծված լինելով հին Հնդկաստանում՝ այնուհետև զանազան խմբագրություններով ու թարգմանություններով տարածվել էր Արևելքի և Արևմուտքի ժողովուրդների մեջ։ Հետագայում Հակոբի թարգմանությունը, ենթարկվելով որոշ խմբագրման, հիմք է դարձել հայերեն տպագրության³²։ Այս վերջին խմբագրությունից էլ ավելի ուշ այլ լեզուներով կատարվել են մի քանի թարգմանություններ (ուուսերեն, վրացերեն³³, ֆրանսերեն և թուրքերեն)։

* * *

Հակոբ Թոխաթցու ստեղծագործության մեջ ավելի արժեքավորը պատմական թեմայով երկու ողբերն են, որոնք ժամանակի հայության ապրած տառապանքները ներկայացնող պատմա-գեղարվեստական կարևոր վավերագրեր են։ Իբրև ողբագիր Հակոբն անդրադարձել է նույն թեմաներին, ինչ որ նրա համաքաղաքացիներ Մինասը, Ստեփանոսը և Ղազարը։ Հայրենի Եվրոպիա քաղաքի ավերումը և Օլախաց երկրի հայության եղերական վիճակն է նա ողբում՝ համեստ ու անպաճույճ խոսքով մեղ պատմելով կատարվածի մասին։

«Ողբ ի վերայ Օլախաց երկրին» գործը նրա գրական երախայրիքն է, գրված հավանաբար 1595—1596 թթ.։ Ողբի եզրափակիչ մասում բանաստեղծը հիշում է, որ՝

Տէր Յովհաննէսըն Կաֆացի,
Եպիսկոպոս սուրբ և արհի,
Անփորձ կենայ ինքն յաշխարհի,
Հրաման ետ, որ ըզբանքս ասի³⁴։

Հովհաննեսը, ինչպես նշել ենք, XVI դարի վերջերին մոլդավահայության առաջնորդ-եպիսկոպոսն էր։ Պատկերվող արհավիրաց իրադարձությունների ժամանակ նա ենթարկվել է տանջանքների։ Պատահական չէ, որ այդ երախտավոր գործչի մասին Թոխաթցին արտահայտվում է մեծ ակնածանքով։

Ողբում անմիջականորեն արտացոլված է 1594—1595 թ. դեկտեմբերի սկիզբը Օլախաց երկրում կատարված դեպքերը, որոնց մասին հանգամանորեն խոսում է նաև Կամենիցի հայ տարեգիրը։ Վերջինիս և Թոխաթցու տրվյալները իբրև նույն անցուդարձերին ժամանակակիցների հավաստի վկայություններ, համերաշխ են իրար։ Պատկերվող ժամանակաշրջանում Օլախաց երկիրը օսմանյան Թուրքիայից վասալական կախման մեջ էր։ Նրա իշխանը

31 Անդ, էջ 277ր։

32 Այդ երկի հայերեն տպագրերի և այլ լեզուներով նրանցից կատարված թարգմանությունների մասին տե՛ս Ն. Ա. Կ. ի ն յ ա ն, Հինգ պանդուխտ տաղասացներ, էջ 189—202։

33 Տե՛ս Մատենադարանի N 84 ձեռագիրը (վրացերեն ձեռագրեր), որի էջ 118ա-ում նշված է. «Այս գիրքը հայերենից է թարգմանված վրացերեն»։

34 «Հանդես Ամսօրյա», 1932, էջ 348։

նշանակում էր սուլթանը: Օգտվելով իրենց դիրքից՝ իշխանները երկրի համար շարիք էին դառնում. սուլթանի և իրենց ազահույժյանը հազուրդ տալու համար նրանք չէին խուսափում հարկման ու կողոպտման ամենազազիր միջոցներից, հաճախ էլ դիմում էին ժողովրդին բռնի կերպով դավանափոխելու վայրագույթյանը: Այդ երկրում վաղուց ի վեր բնակություն հաստատած հայույթյան քաղաքական բախտին էլ հիմնականում իր ողբում անդրադարձել է Հակոբ Թոխաթցին:

Անցքերը ծավալվում են այսպես:

Օլախաց երկրի վոյվոդա (իշխան) Ահարոնը, որի նստավայրն էր Յաշը, պատգամ է հղում և հրավիրում հարևան կազակներին թուրքերի դեմ միասնաբար կռվելու: Երբ նրանք կազմ ու պատրաստ եկել բանակիլ էին Ծոցորայի ջրեզերքին, նա իր խոսքը դրժում է.

Չար վոյվոտան Օլախ ազգին
Ասաց՝ Չե՛մ կրոուիր ևս [հետ] թուրքին,
Ես կու կրոուիմ հետ դազախին
Նւ կոտորեմ զամենեսին³⁵:

Ապա Ահարոնը հեծելազորով նախահարձակ է լինում ընդդեմ կազակների, բայց մարտում պարտվելով՝ դիմում փախուստի: Խաբված կազակները կողոպուտի են ենթարկում նրա իշխանույթյան սահմանամերձ բնակավայրերը: 1594 թ. հոկտեմբերի 26-ին նրանք լցվում են Յաշ-պազար, որի բնակչույթյան մի մասը միայն հասցնում է ապաստանել լեռներում ու անտառներում:

...Փախուստ առաւ ազգն օլախին.
Ոմանք փախան մորին մրտին,
Եւ այլք գնացին ի բարձր լերին:

Երբ Եաշ-պազարըն լրսեցին՝
Ջձիանն ի կառս լրժեցին՝
Ամենեքեան փախան գնացին
Բ յերեսաց շար դազախին³⁶:

Մեծապես տուժում է ժողովուրդը, թալանվում նրա ինչքը: Կազակական ներխուժումն առթած Ահարոնը մի շաբաթ անց կրկին հակվում է իր նախկին մտադրույթյանը՝ դաշնակցում է կազակների հետ: Նրանք միացյալ ուժերով մարտական զործողությունների են դիմում ընդդեմ թուրքական բռնապետույթյան.

Դարձեալ երեր ըզդազախնին,
Գընաց կրոուիլ ի հետ տաճկին³⁷:

Սուլթանական Թուրքիայի դեմ կազակների մղած շարունակական պայքարն, ինչ խոսք, առաջադիմական նշանակություն ուներ. այն հետապնդում էր Ռուսիայի հարավը օսմանյան լծից ազատագրելու նպատակ և համապատասխանում էր թուրքերից ճնշված ու ստրկացված ժողովուրդների անկախու-

35 Մատենադարան, ձև. № 2856, էջ 463ա:

36 Անդ, էջ 463բ:

37 Անդ, էջ 464ա:

թյան տենչերին: Բնորոշ է, որ կազակների և օլախների (մուղավներ) վերոհիշյալ հաճելի դաշինքի փաստն առանձին օրհնանքով է արձանագրում նաև Կամենիցի տարեգիրը: Կազակները, գրում է նա, «...յետ սակաւ աւուրց դարձեալ անցին Օլախաց երկիր. և գնացին և հաշտեցան և երդուան միմեանց, և միաբանեցան հետ պարոնին. և մտան Թուրք աշխարհ վասն պատերազմելոյ ի հետ տաճկաց: Զոր երկնաւոր Աստուած տացէ նոցա կարողութիւն և զօրացուցէ զնոսա... զի փոքր մի ժամանակ խաղաղութիւն գտցէ ազգն քրիստոնէից...»³⁸:

Ողբում պատմվում է, որ կազակական զորագլուխ Լոպոտայի և Ահարոն պարոնի արշավը, այնուամենայնիվ, հաջողությամբ չի պսակվում: Վերջինին իր հեծելազորի պետը՝ Րզվանը, գահընկեց է անում և փոխարենը 1595 թ. ապրիլից մինչև օգոստոսի կեսերը իշխում երկրում: Բնակչության վիճակն ավելի տազնապալի է դառնում:

Երկիրն ամէնըն սարսէին
 Ի յահէ անհաւատ թաթրին՝
 Որպէս ըզնաւ ի մէջ ծովին,
 Որ ի յալեացըն տատանին³⁹:

Հակոբ Թոխաթցու համակրանքը սլավոն ժողովրդի կողմն է. նա երկրի խաղաղեցման հնարավորութիւնը տեսնում է լեհական պետութեան միջամտութեան մեջ: Եվ իրոք որ Լեհաստանի Զիգմունդ թագավորը միջամուխ է լինում. նրա հրամանով կանցլեր Յան Զամոյսկին «բիր հեծելաւ» մտնում է Օլախաց երկիր: Րզվանը, տեղի տալով, փախչում է «երկիր Մաճրին» (Հունգարիա), իսկ՝

Քանցէլարըն բարէնըշան,
 Որ հալածեաց ըզշարն Րզվան,
 Պարոն եղիր զԵրեմիան,
 Որ է արժան պարունութեան⁴⁰:

Կատարվածի հետ հաշտվում է նաև Ղրիմի թաթար խանը, որը, ըստ Կամենիցի տարեգրի, «...հրամանաւ պիղծ և անհաւատ [խոնդ]քարին (թուրքսուլթան) ...կամէր պատերազմել ընդ նոսա»⁴¹: Իշխանագուրկ Րզվանի՝ կրկին պաշտոնին տիրանալու փորձն ավարտվում է անհաջող. Սուլավա քաղաքի մոտ 1595 թ. դեկտեմբերի 2-ին տեղի ունեցած ճակատամարտում նա պարտվում է, գերի բռնվում և ցից հանվում:

Հակոբ Թոխաթցու ողբը գրված է անցքերի թարմ տպավորութեան տակ՝ աչքի է ընկնում փաստական նյութի ճշմարտացիութեամբ: Այն մտահղացված է որպես ողբախառն հիշատակարան: Նրանում առանց բանաստեղծական բարձր պատկերավորութեան ներկայացվում են պատմական դեպքերը՝ որտեղ կամ երբ կատարված լինելու հանգամանքների ծանուցմամբ. և անձնավորութիւնները՝ նրանց հանդեպ ողբասացի դրական կամ բացասական գնահատականավերաբերմունքի ուղեկցութեամբ: Վավերագրական այդ ճշմարտացիութիւնն

38 «Կամենից», էջ 59:

39 Ստեփանոսյան, ձեռ. № 2856, էջ 464ա:

40 Անդ, էջ 464բ:

41 «Կամենից», էջ 60:

էլ ողբին տվել է հիշատակարանային բնույթ: Գեղարվեստական տեսակետից աղոտ ու թերամշակ նրա բանատողերում, այնուամենայնիվ, ինչ-որ շափով լուսավորվում է պատկերվող ժամանակաշրջանը, և երևում ողբագիր հեղինակի ներաշխարհը:

Թոխաթցին ցավով ու սրտմտությամբ է պատմում Յաշի եկեղեցում պահված հայերեն գրքերի ու ժողովրդի ունեցվածքի կողոպտման մասին: Բնակչությանն ահ ու սարսափ էր ապրում: Ի հեճուկս իրենց խաբած Ահարոն պարոնի՝ կազակները ուր որ է ներխուժելու էին նրա նստոցը՝ Յաշ: Ով հնար ուներ՝

...Ջձիանն ի կառքս լրծեցին,
Ամենեքեան փախան գնացին⁴²:

Այնտեղ ապրող հայերի մի մասը, սակայն, հեռանալու հնարավորություն չունենր. դրանք բանաստեղծից երբեմն «խիստ շէն» համարված քաղաքի առևտրականներն էին, որոնք իրենց ունեցվածքը, անձեռնմխելի դարձնելու նպատակով, փոխադրում են տեղի հայկական եկեղեցին:

Եկեղեցուն ամուր դրովին
Ներսի դիհաց ամրացուցին,
Դուրսէ մեծ կըպղաք դրին,
Թէ բանալու ճար չի լինին⁴³:

Բայց եկեղեցին դաժանորեն թալանվում է.

Յեկեղեցինըն դիմեցին,
Ջերկաթէ դուռն կոտրեցին,
• Բիւրք ի բիւրոց ի ներս մրտին՝
Քան զշար զազան անապատին:

Ստացուած խիստ շատ էին,
Մինչ յառաստաղն հասեալ էին,
Ջամենայն ինչ առեալ գնացին.
Ոչինչ մրնաց յեկեղեցին⁴⁴:

Մի երկրորդ հրոսախմբի զոհն են դառնում գրքերն ու եկեղեցու սպասները. սա նույնիսկ քաշում է Հովհաննես եպիսկոպոսի և մնացած մարդկանց հանդերձները, իսկ հետո քաղաքն այրելով՝ հեռանում:

Ինչպես այս, այնպես էլ Թոխաթի մասին իր ողբում Հակոբը կիրառել է յուրահատուկ հորինվածք. նա ասելիքը բաժանում է երեք փոքր ու մեծ հատվածների, այն է՝ մուտք-նախերգի, գործողություն-ընթացքի և հիշատակարան-վերջերգի:

Առաջին հատվածում նա լսողին ազդարարում է իր պատմելիք ողբալի բաների մասին և մի տեսակ զգաստացնում ու նախապատրաստում նրան՝ ունկնդիր լինելու այն հառաչանքներին, որոնց պատճառը, իբր, նաև հենց իրենք տուժողներն են եղել:

42 Մատենադարան, ձեռ. № 2856, էջ 463տ:

43 Անդ:

44 Անդ:

Լալով ասեմ ողբերական,
Արտասուելով հառաչական,
Այս անողորմ բանքս որ եղան՝
Ի մեր մեղացրն գործեցան⁴⁵;

Աստծու հանդեպ «մեղսագործ դառնալու» պատճառով նրանից պատժվելու վերաբերյալ ավետարանական տեսակետն է այս, որը մեր ողբասացները միջնադարում որդեգրել էին իբրև հայություն ազգային-քաղաքական դժբախտությունները բացատրող միակ ճշմարիտ բանալի: Այդ համոզմունքով էլ Հակոբ Թոխաթցին իր երկի վերջում չի մոռանում ցավատանջ հոգով խորհրդատու լինել մարդկանց, թե՛

Աղօթեցէ՛ք դուք անխափան,
Որ ամէն շար բարի դառնան⁴⁶;

Ողբի հիմնական և ընդարձակ մասը կազմում է միջին հատվածը, որտեղ շարժանկարային սրբնթացություններով ներկայացվում են ողբաոթ իրադարձությունները: Մրան հաջորդում է վերջին՝ եզրափակիչ հատվածը: Այստեղ բանաստեղծը պատշաճ համեստությամբ հիշատակագրում է, թե ո՛ւմ պատվերի համաձայն է ասել ողբը՝ շմոռանալով փառաբանել իր մեկենասին և նվաստացնող խոսք ասել իր մասին («Սպիսկոպոսրն՝ սուրբ հոգի, Ծս՝ անարժան հող և փոշի»⁴⁷):

Ողբին որոշ շորություն է հաղորդում այն, որ հեղինակը, համանման վիճակներ ու հերոսներ պատկերելիս, չի հասել արտահայտչական բազմազանության: Նրա մակդիրներն ու համեմատությունները միակողմանի են. շատ է սիրում կրկնել շաւր, շաւր կենդանի, խմուր շաւրի, պիղծ. շուն, սուրբ, բարի. բարի իշխան և այլն: Մրանք, բարոյական հատկանիշ ներկայացնելով հանդերձ, հոգեբանական խորություն, ուրեմն և գեղարվեստական հուզականություն չեն դրսևորում:

Չզացվում է, որ Հակոբը ողբն հորինելիս հետևել է իր նախորդ Մինաս Թոխաթցու «Ողբ ի վերայ Օլխասց երկրի հայերուն» գործին: Այդ երկու ողբերը իրար հետ աղերսվում են թե՛ համանման թեմաներով, թե՛ իրական դեպքերի պատճառների մեկնաբանմամբ և թե՛ պատկերավորման միջոցներով⁴⁸:

*

Փաղափարական հագեցվածությամբ և արվեստով ավելի բարձր արժեք ունի Հ. Թոխաթցու մյուս ողբը, որը կրում է «Տաղ և ողբանք ի վերայ Եղով-

45 Անդ, էջ 463բ:

46 «Հանդես Ամսօրյա», 1932, էջ 348:

47 Անդ:

48 Համեմատության համար բերենք թեկուզ հետևյալ հատվածները.

Մինաս.

- ա. Գոչեմ աւ ձեզ ողբերդական,
Հառաչելով յոյժ լալական:
բ. Ծս. անարժան մեղաց դերի
Մինաս անուն պարսաւելի,
Ծս եմ զարիպ Հայաստանցի
Թոխաթ անուն քաղաք կոչի:
(Ակինյան, Հինգ պանդուխտ
տաղասացներ, էջ 85 և 101):

Հակոբ

- ա. Լալով ասեմ ողբերդական,
Արտասուելով յոյժ լալական:
բ. Ծս անպիտան մեղօք իլի,
Որ եմ զարիպ ի յայսմ երկրի,
Յակոբ անուն պարսաւելի,
Ի քաղաքէն եմ Թոխաթի:
(«Հանդես Ամսօրյա», 1932,
էջ 343 և 348):

կիա քաղաքին, որ այժմ ասի Քօխաթ, զոր ոմն անօրէն, Տալու-Հասան ասեն, որ եկաւ այրեաց և աւերեաց» խորագիրը: Այն պատկերում է 1602 թ. Եվզոկիա քաղաքի գրավումը և ավերումը և ունի պատմական ու գեղարվեստական կարևոր արժեք:

XVI դարի վերջերին և XVII դարի սկզբին օսմանյան բռնապետության մեջ մուկեղ ջելալիական շարժումն ահռելի սրարշավով ողջ Փոքր Ասիայում ավարի ու ավերի էր ենթարկում բնակավայրերը ամենուր տարածելով մահ ու սարսափ: Այդ շարժումը, որ ծայր էր առել դեռևս XVI դարի առաջին կեսին, սկզբում հիմնականում մուսուլման աշխատավորության ընդլզման արտահայտությունն էր ընդդեմ թուրքական ռազմա-ավատական բռնության: Սակայն հետագայում, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, ինչպես միաբերան վկայում են հայկական գրավոր աղբյուրները (Ստեփանոս Քոխաթցու և Ազարիա Սասնեցու ողբերը, Դավրիժեցու պատմությունը, Դարանաղեցու ժամանակագրությունը, ձեռագրերի բազմաթիվ հիշատակարաններ և այլն), ջելալիությունը կորցրել էր իր նախկին ժողովրդական բովանդակությունը, այն ներկայացնում էր տիրակալության ձգտող թուրք առանձին փաշաների, բեգերի և շայլ բարձրաստիճան անձնավորությունների կողմից գլխավորվող ռազմաբանակներ, որոնցում մեծ թիվ էին կազմում արյան ու կողոպուտի ծարավ ենիչերիները⁴⁹: Մասնավորապես հայ բնակչության համար այդ շարժումն ունեցել է կործանարար հետևանք:

1602 թ. մայիսի 29-ին, մեկ ամսվա պաշարումից հետո, Դելի-Հասանի խուժանը գրավում է Քոխաթ քաղաքը. կողոպուտի ու մանկահավաքի մոլուցքով՝ ջելալի ռազմապետը անլուր դաժանությամբ հոշոտում է բնակչությանը, ամեն ինչ սրբում՝ երբեմնի շեն ու բարելի քաղաքը դարձնելով անմարդ ու ավերակ: Թուրք պատմիչ Նայիմայի վկայությամբ ասպատակները «...փողերը՝ վահանով, իսկ մահուղը, շուխան և այլ թանկագին ապրանքները թրով շափում և բաժանում էին իրար մեջ»⁵⁰: Սարսափահար բնակչությունը, բնաջնջումից խուսափելու համար, հուսահատորեն հեռանում է իր օրրանից. ոմանք գնում են դեպի արևելք (Պարսկաստան), իսկ շատերը՝ Պոլսի կողմերը, այնտեղից թափանցելով նվրոպա:

Քաղաքավիշտ ժամանակ էր ապրում հայությունը: Դարասկզբին վերսկսված պարսկա-օսմանյան պատերազմները, գումարվելով ջելալիական շարժմանը, ծանրածանր ու անտանելի էին դարձրել վիճակը հայերի համար: Հեռու լեհաստանում իր ժողովրդի բախտով խորապես հետաքրքրվում էր Հակոբ Քոխաթցին: 1608 թ. թողած մի հիշատակարանում նա դառն կսկիծով խոսում է հայրենակիցներին հասած արհավիրքների մասին. «...գերի և եղկելի եղեն,—ասում է նա,—ամենայն ազգն Հայոց, զի ցրուեցան ամենքեան ընդ երեսս երկրի, որպէս փոշի հոսեալ ի հողմոյ՝ ծագեաց ի ծագս, բաժանեալք ի սիրելեաց, հեռացեալք ի հայրենեաց, որոշեալք ի յընտանեաց, անշատեալք յամենայն բարութեանց, շրջէին պանդխտէին նշղեհացեալք ի մէջ

⁴⁹ Մեր նպատակից դուրս է ջելալիական շարժման ամբողջական պատկերն ու պատմությունը մեջ նրա տեղի ու դերի գնահատությունը տալը:

⁵⁰ Տե՛ս Քուրթական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հ. Ա, կազմեց Ա. Խ. Սաֆրաստյան, Երևան, 1961, էջ 69:

այլասեռն ազգաց, այլախօս լեզուաց և անընդել աշխարհաց, որպէս զոչխառ, որոց ոչ իցէ հովիտ անտերունչ մնացեալք...»⁵¹։

Ավերված Թոխաթից բազմաթիվ հայեր ապաստանել էին Լեհաստանի Զամոսցա քաղաքում. նրանց մեջ էր նաև տաղասացի վաղ տարիների ուսուցիչը՝ Հակոբ Այվաթենցը։ Վերջինս իր աշակերտին ծանոթացնում է հայրենի քաղաքի անկման լալահառաչ պատմությունը և խնդրում նրանից ողբերգել իրենց ցավ ու վիշտը։ Թոխաթցին կատարում է նրա ցանկությունը։ Ողբի վերջում հեղինակը մեծարում է իր պատվիրատուին, նրան համարում «ազնուական և անուանի», «հայր հոգելի», որը գնահատել է իր տաղանդը և ստիպել եղբերգել։ Դրանով է նա բացատրում այն՝

...Որ այսքան բանս շարադրեցան,
Յանգէտ մըտացս ի կարգ անկան⁵²։

Բանասիրության մեջ «Տաղ և ողբանք ի վերայ Եդովկիա քաղաքին» երկի⁵³ գրություն համար նշվել է սխալ ժամանակ։ Համաձայն Ակինյանի այն ստեղծվել է «հավանորեն 1614—1620 շրջանին»⁵⁴։ Որովհետև Թոխաթցի։ 1614 թ. նույն Այվաթենցի խնդրանքով լատիներենից թարգմանել է «Նօթն իմաստասիրաց պատմութիւն»-ը, ուրեմն, եզրակացրել է Ակինյանը, ուսուցչի այցն իր տաղերգու աշակերտին և ողբը գրելու պատվերը կարող էր տրված լինել ամենավաղը այդ թվականին. «Համենայն դեպս,—նկատել է տալիս նա,—1614-ին անիկա (Այվաթենցը—Պ. Խ.) Լեհաստան կգտնվեր, ուր հորդոր կկարդար իր աշակերտին թարգմանել Յոթն իմաստասիրաց պատմությունն և հորինել Թոխաթի ողբը»⁵⁵։ Նույն միտքը կրկնում է Ա. Ալպոյաճյանը⁵⁶։

Այդ տեսակետը ժխտվում է երկու կարևոր տվյալներով։

Առաջին՝ Մատենադարանի № 10050 ձեռագրում կա խնդրո առարկա ողբը (343ա—347բ էջերում)։ Սույն ձեռագիր տաղարանը հիմնական մասով՝ սկզբից մինչև 427բ էջը, իր իսկ Հակոբ Թոխաթցու ինքնագիրն է՝ ավարտված 1605 թ. մարտի 14-ին, ինչպես երևում է նրա գրչագրած բաժնի վերջին էջում պահպանված հիշատակարանից։ Այնտեղ ասված է. «...Աղաչեմ զձեզ, որ չի մեղայդրէք այսարմարութեան գրիս, գի երբեմն-երբեմն գրեցի։ Ի թվ. ՌԾԳ (1605) մարտ ԺԴ (14)»⁵⁷։ Ողբը հիշատակարանից շատ ավելի առաջ է տեղադրված, ուստի գրված է ոչ ուշ, քան 1605 թ. սկզբները։

Երկրորդ՝ իր պատվիրատուի մասին ողբասացն ասում է, թե նա «պանդրխտեցաւ յայս նահանի»⁵⁸, այսինքն՝ Զամոսցա, ոչ թե 1614 թ. կամ հետո. հրբ դարիթության գնալու մի առանձին գորեղ պատճառ չկար (ընդհակառակը, նժղեհացյալներից շատերը դարձյալ վերահաստատվում էին իրենց նախ-

51 «Կամենից», էջ 169։

52 Մատենադարան, ձեռ. № 10050, էջ 347բ։

53 Ողբը պահպանվել է Մատենադարանի №№ 10050, 3081 և 2939 ձեռագրերում։

54 Ակինյան, Հինգ պանդ. տաղ., էջ 144։

55 Անդ։

56 Ա. Ալպոյաճյան, Պատմություն Եվդոկիո Հայոց, էջ 1551։

57 Մատենադարան, ձեռ. № 10050, էջ 427բ։

58 Անդ, էջ 343ա։

կին բնակավայրում), այլ «ի յայն դառն ատենի»⁵⁹, ասել է՝ Թոխաթի ավերումից անմիջապես հետո, ամենայն հավանականությամբ՝ 1603—1604 թթ.: որը և ողբի գրության անվիճելի ժամանակն է: Ինչ վերաբերում է «Ծօթն իմաստասիրաց պատմութիւն» երկի թարգմանությանը, ապա հակասական չի լինի կարծել, որ նրա պատվերը Հակոբն ստացած կարող էր լինել կա՛մ վաղօրոք, նույն 1603—1604 թթ., կա՛մ էլ հետագայում՝ նամակով (չէ՞ որ նրա և ուսուցչի միջև նամակադրական կապ է գոյություն ունեցել⁶⁰): Այս կարծիքը հավանական է թվում, որովհետև 1610-ական թվականներին Այվաթենցի՝ իր աշակերտին այցելելու վերաբերյալ որևէ փաստ հայտնի չէ:

«Տաղ և ողբանք ի վերայ Եղովկիա քաղաքին» գործն օժտված է գրական բարձր արժանիքներով: Ողբասացը գունեղ ու ներգործուն բանաստղերում կենդանացնում է ջելալիական ներխուժման նախօրեի Եվդոկիան՝ իր ճոխ ու հրապուրիչ բնանկարով, վաճառաշահ շուկաներով ու փողոցներով, աշխույժ մարդկանցով: Ապա, հետագա ողբերգական դեպքերի նկարագրությանը զուգընթաց, եղերերգվում է և նրանց ծանր հետևանքը: Դրանից էլ ողբն ստացել է նաև քնարական բնույթ: Այստեղ յուրաքանչյուր քառատողից հետո Թոխաթցին հանգր փոխում է, որով և թոթափվում է քերականական միևնույն ձևերի կաշկանդիչ օգտագործումը: Այդպիսով նախորդ ողբում աչքի զարնող հանդային միօրինակությունը այստեղ տեղի է տալիս բազմազանության, որից և ուրիշը շահում է:

Ինչպես նախորդ ողբում, այնպես էլ այստեղ, Թոխաթցին ժողովրդին հասած արհավիրքների պատճառը միամտորեն փնտրում է նրա գործած մեղքերի մեջ: Երկի սկզբում հայտնելով ողբաուրիթ անցքի մասին՝ նա տեղնուտեղը հարում է, թե Եվդոկիան պատժապարտ դարձավ՝ «վասն մեղաց ժողովորդեան»⁶¹:

Ապա, որպես որդեկորույս մի մայր, որ թվում է իր սիրելիի բարեմասնությունները, նա ցուցադրում է կոտորածին ու քանդումին նախորդած ժամանակի քաղաքի պատկերը: Ահա Եվդոկիայի բնանկարը.

Վայելլազեղ է նիստ քո(յ)ին.

Ի մէջ երկու ձորամիջին՝

Թիկունք տուեալ ես դու դարին

Նւ կու հայիս երես դաշտին:

Ի քէն բրդխէ ջուր աղբերաց՝

Ի շորս անկին քո տարածած,

Անուշահամ՝ ի ծարաւեաց,

Առոզանող անդաստանաց⁶²:

Բնության պարզեւած գեղեցկության թերին լրացրել են քաղաքի շինվածքները՝ նախշված վերնատներով ապարանքները, «աղէկ» տները, փառավոր եկեղեցիները, զմբեթարդ բաղնիքներն՝ իրենց շատրվաններով ու խճանկաւ

⁵⁹ Անդ.

⁶⁰ Անդ, էջ 341ր-ում. Այվաթենցին ուղղված մի բանաստեղծության մեջ Հակոբը գրում է. «Միտ իմ քո նամակաւոյ յոյժ մխիթարի»:

⁶¹ Անդ, էջ 343ա.

⁶² Անդ, էջ 343ր.

հատակներով: Իսկ ամրոցի նմանեցվող շոր: «պէզաստունները» (կտավա-
վաճառանոց) և բարեւի շուկաները վկայել են, որ այնտեղ մի ժամանակ բա-
վական զարգացած են եղել առևտուրն ու արդյունագործությունը, որոնց շնոր-
հիվ գանձ են կիտել խոշաներն ու վաճառականները:

Քո տուվաթվորքն և խոճանին
Փարթամ և անուանիք էին,
Մեծահամբաւ պազիրկաննին
Խրրոխտալով զօրանային⁶³:

Բազմապիսի արհեստավորների արտադրանքին հետամուտ՝ այլուստ քա-
ղաք են ժամանել առևտրական քարավանները: Տեղի իջևանատներն ու խա-
ներն էլ կառուցված են եղել նրա՝ համար՝

...Որ կուգային վաճառակներ
Եւ օթէին բազում օրեր⁶⁴:

Հակոբ Թոխաթցին, հայրենի քաղաքի անցյալը ներկայացնելիս, անշուշտ
դիմում է որոշ գունազարդման. նա նկատել է տալիս, թե, իբր, այնտեղ բնակ-
չության բոլոր խավերը զվարճացել են բարիքների մեջ:

Մերք և տըղայք, կանայք, մանկունք
էին ի քեզ որպէս ծաղկունք,
Պայծառ մարմնով, ուրախ սըրտիւք,
Բընաւ շի կայր ի քեզ աղմուկ⁶⁵:

Սակայն պարզ է հեղինակի միտումը. միջնադարի հայ մյուս ողբագիր-
ների պես, Թոխաթցին ևս, ուժեղ սուպրոբուժյուն առաջացնելու համար, գոր-
ծադրել է գեղարվեստական հակադրության հնարը. նա իրար է հանդիպա-
դրել քաղաքի դառնաղետ ներկայի և համեմատաբար ավելի անդորր անցյա-
լի պատկերները, որով և նրա վիշտը դարձել է ավելի ցնցող ու շոշափելի: Ան-
շուշտ Եվդոկիան էլ մի բնակավայր է եղել, ուր օսմանյան բարբարոս կարգից
մտրակվել ու հոշոտվել է հայությունը, տաժանքի ծանրագույն բեռ է կրել
աշխատավորությունը, բայց ջելալիների հարվածը կրկնապատկել ու ավելի էր
ծանրացրել ժողովրդի ողբերգությունը: Դա հայրենազրկության ու մասսայա-
կան բնաջնջման ողբերգություն էր:

Ավերի պատճառը տեսնելով աստծու նկատմամբ կատարված մեղսագոր-
ծության մեջ՝ ողբասացը ցավագին ապրումներով հնչեցնում է Եվդոկիայի խոր-
տակման ու փառազրկման մեղեդին: Իբրև մեծ արհավիրքի նախանշաններ
քաղաքում երևացել են «մահ դառնագոյն» և «սով սարսելի», բայց գրանցից
ժողովուրդը չի զգաստացել, մինչդեռ, ըստ բարեպաշտ հեղինակի, շարիքից
խուսափելու համար նա պետք է առատորեն ողորմություն տար: Թոխաթցու
ըմբռնմամբ աստծու ողորմածությանը ոչնչով չարժանացած քաղաքը, այդ-
պիսով, մատնվում է «այն պղծոյն»՝ Դելի-Հասանին:

63 Անդ, 1ջ 344բ:

64 Անդ, էջ 344ա:

65 Անս, Էօ 344բ:

Եւդոկիա քաղաք գոված,
 Ճէյալին քեզ շարիք մախաց.
 Եկեալ դէմ քեզ շորեք դիհաց՝
 Յանկարծակի դքեզ պաշարեաց⁶⁶։

Ջելալի ուղմապետի մեծաթիվ հրոսակները մուկնորեն սրածել են բնակչությանը, գլխատել ծեր ու երիտասարդ, իսկ նորաբողբոջ շատ մանուկների օսմանյան բռնապետութեամբ իսկ վաղուց որոճված ու գործադրված անողորմութեամբ քաշել ծնողներից։

Այնժամ ըզծերսն կոտորեցին,
 Ջերիտասարդսն գլխատեցին
 Եւ զգեղեցիկ մանկունսն քո(յ)ին
 Ի ծրնօղացրն զատեցին⁶⁷։

Մազապուրծ փրկվածները՝ ամեն ինչ թողած թշնամուն, ապավինել են բերդ ու լեռներին, ցրվել սար ու ձորեր, դիմել վտանգաշատ պանդխտության։ Ապրելու տենչը փախչողներին ստիպել է հայրենական օջախի հետ թշնամուն թողնել նաև իրենց ինչքը։

Ընկեցին զինչսրն զամենայն,
 Հազիւ զմանկունսն առեալ զերծան⁶⁸։

Աղետավոր անցքի նկարագիրը ողբում հյուսված է սրտառուչ ու անկեղծ զգացմունքներով։ Հեղինակը ոչ թե անտարբեր ու քարսիրտ արձանագրող է, այլ ժողովրդի ցավն անձնապես զգացող ու ապրող, նրան վշտակցող ողբասաց։

Դեռևս լաստիվերտցու ողբից սկսած, ինչպես դիտված է, մեր բանաստեղծության գլխավոր ըղձակետը ոչ թե հանդերձյալ կյանքում մեղսագործների դատապարտման և անմեղների փրկագործման գաղափարն էր, այլ երկրի վրա ստեղծվելիք արդարության և զգատության տեճը։ Քրիստոսին ռաւոււն ա՛յս կյանքի ապավինելու և ինքնահուսադրման մտահածումն արտահայտվել է նաև Թոխաթցու ողբում։

Քրիստոս՝ որդին հօր միածին,
 Նորոգեսցէ դարձեալ կրրկին
 Ըղչինութիւն քո(յ)ոյ յարկին
 Եօթնապատիկ՝ քան զառաջին⁶⁹։

Ակնկալվող այս փրկության ապավինումն էլ երկին հաղորդել է լավատեսական շունչ։ Այդպիսով, ողբը ոչ միայն անդարձ կորստի սգումն է, այլև հույսի փայփայում, որ Եվդոկիայի հայ կյանքը կվերածնվի յոթնապատիկ ավելի վառ, քան առաջ էր։ Այս հույսն էլ Հակոբ Թոխաթցու ստեղծագործությանը հաղորդում է լավատեսական շունչ, նրան միացնում համազգային տառապանքն ապրած, բայց արիասիրտ մնացած միջնադարյան հայ ողբասացներին։

66 Անդ, էջ 345բ։

67 Անդ։

68 Անդ։

69 Անդ, էջ 347ա։